

Հաստատված է

Նորակերտ համայնքի ավագանու

21.12.2016 թ-ի թիվ 24 որոշմամբ

Նորակերտ համայնքի ղեկավար՝

----- Գ. Մարգարյան

**ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021թթ.**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ**

**ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**

# Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն
  - 2.1. Համայնքի քննհանուր նկարագրություն
  - 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը
  - 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը
  - 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները
  - 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ
  - 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
  - 3.1. Համայնքի զարգացման տեսլական
  - 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ
4. ՀՀԶՄ ֆինանսավորում
5. ՀՀԶՄ մոնիթորինգ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 16 - րդ հոդվածի ներկայացնում եմ Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի 2017-2021 թթ. Սոցիալ – տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը:

Ծրագիրը ներառում է՝

1. Համայնքի զարգացման գյուղատնտեսական ուղղությունը
2. Զարգացման սոցիալական ուղղությունը
3. Փոքր և միջին բիզնեսի զարգացման ուղղությունը
4. Կրթամշակութային զարգացման ուղղությունը
5. Պաշտպանական ուղղությունը

Համայնքի բյուջեն սեփական եկամուտների մասով ավելանալու միտում առաջիկա 5 տարիներին չունի, բնակչության մեծ մասը կորցնում է վճարունակության աստիճանը ինչի հետևանքով վերջին տարիներին թերակատարվում է բյուջեն:

Գյուղատնտեսական մթերքների գների անկման, եղանակային ոչ նպաստավոր պայմանները բերեցին գյուղատնտեսական արտադրանքի կրճատմանը, բնակչության վճարունակության անկմանը և սոցիալական վիճակի լարվածության ուժեղացմանը:

Ծրագրի մշակման ժամանակ հաշվի են առնվել համայնքի թույլ և ուժեղ կողմերը, ֆինանսական և տնտեսական հնարավորությունները, ուսումնասիրվել է բնակչության առաջնահերթություն պահանջող խնդիրները, կառավարության առաջարկած ծրագրերն ու առաջնահերթությունները:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### *Աշխարհագրական դիրք, պատմական ակնարկ*

Նորակերտ գյուղը գտնվում է ՀՀ հյուսիսարևելյան մասում, Սևանա լճի արևելյան ափից 5 կմ հեռավորության և ծովի մակերևույթից 1995 մ բարձրության վրա: Գյուղի ամբողջ վարչական տարածքը գտնվում է հարթ ռելիեֆի վրա հիմնականում վարելահողեր են: Գյուղը կառուցվել է 1927 թ-ին և բնակեցվել է Արևմտյան Հայաստանից գաղթած հայերով : Ներկայումս գյուղի շուրջ 98 % -ը բնակեցված է հայերով: Գյուղում ապրում են նաև ազգությամբ քուրդ երկու ընտանիք: Գյուղը ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն: Գյուղի կլիման բարեխառն է և անկանխատեսելի տեղումների քանակը 450-600մմ, որը տեղում է մայիս և հունիս ամիսներին, ամառը երաշտ է, ձմեռը ցուրտ:

## 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Ա.Ժողովրդագրություն

Գյուղի ազգաբնակչության 98 %-ը հայեր են, ընդհանուր բնակչության թիվը 1021 մարդ է. որից՝


1. Երեխաներ 0-6 տարեկան - 151
2. Դպրոցականներ 6-17 տարեկան - 82
3. Թոշակառուներ - 135
4. Հաշմանդամներ - 25
5. Աշխատունակ բնակչության թիվը - 420
6. Փախստականներ - 8
7. Գործազուրկներ - 110
8. Գրանցված ընտրողների թիվը - 646
9. Գյուղի ծխերի թիվը – 278
10. Ընտանեկան նպաստառուներ – 37

### Բ. Տեղական ինքնակառավարման մարմիններ

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ղեկավարն ու համայնքի ավագանին, որոնք ընտրվում են 5 տարին մեկ: Ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի ղեկավարը իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի միջոցով:

Համայնքապետարանի կառուցվածքը հետևյալն է՝



## **Գ. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը**

Համայնքի սեփականություն են հանդիսանում .

1. Գյուղապետարանի շենքը, որը վերանորոգվել է մասնակի և ունի վերանորոգման կարիք
2. Խմելու ջրագիծ՝ վերանորոգման կարիք ունի:
3. Ոռոգման ներտնտեսային համակարգ, վերանորոգման կարիք ունի:
4. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ 15 կմ, գրունտային է և վերանորոգման կարիք ունի:
5. Ներհամայնքային կամուրջներ 12.
6. Հուշախաչքար 1.
7. Խաղասրահ 1.
8. Գերեզմանատուն 1 գործող
9. Խորքային հորեր 5 հատ
10. Բուժ. կետ 1, վերանորոգման ենթակա:
11. Այլ սեփականություն (հողեր տարածքներ) և այլն:

## **Դ. Շրջակա միջավայրի պահպանություն**

Խմելու ջրատարի ամբողջ ցանցից վերանորոգվել է 2600 մ. որը համապատասխանում է գործող չափանիշներին: Համայնքում չի կազմակերպվում աղբահանություն, այն կատարվում է անհատական ձևով, որը որոշ բնապահպանական խնդիրներ է առաջադրում:

## **Ե. Բնակարանային տնտեսություն**

Համայնքում կա 183 առանձնատուն, 2740 հա մակերեսով: Բնակարանները հիմնականում կառուցվել են 1927-1970-ական թվականներին և ունեն հիմնական վերանորոգման կարիք:

## **Զ. Հողատարածքների օգտագործում**

1. Վարելահող – 2025 հա
2. Սեփականաշնորհված հողեր – 892.2 հա, որից՝ 677.21 հա – ֆիզիկական անձանց, 214.99 հա – իրավաբանական անձանց
3. Արոտավայր-159.44 հա
4. Անօգտագործելի հողեր-0 հա

5. Դաշտամիջյան ճանապարհներ- 12.53 հա
6. Գերեզմանոց -2.18 հա
7. Տնամերձ հողեր- 65.74 հա
8. Գյուղամիջյան փողոցներ – 11 կմ
9. Ջրածածկ տարածք – 0
10. Զբոսայգի – 0 հա

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը մեծամասամբ կախված է գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալներից, որը ունի հետևյալ պատկերը՝

### *Ա. Դաշտավարություն*

Նորակերտը համեմատած մինչև սեփականաշնորհումը բնութագրվում էր դաշտավարության վարման բարձր մակարդակով, տնտեսությունը համարվում էր Հանրապետությունում առաջին սերմ արտադրող տնտեսություններից մեկը:

Բնակչության մոտ 60-75 %-ը չի աշխատում որևէ այլ կազմակերպություններում և բնակչության հիմնական դրամական մուտքը հողից ստացված բերքի իրացումն է , որը լինում է տարեկան մեկ անգամ: Մինչ դեռ բույսի մշակության ցանքի սկզբից մինչև բերքի ստացումը և իրացումը տևում է 4ամսից մինչև մեկ տարի, որի ընթացքում դժվար է առանց դրամի առկայության կազմակերպել հողի ինտենսիվ մշակում, իսկ հողի ինտենսիվ մշակման համար անհրաժեշտ է՝

1. Հիմնական պարարտացում
2. Ճիշտ ժամանակին վար
3. Ժամանակին ցաքանում
4. Որակով ցանք
5. Ախտահանված և որակով սորտային սերմացու
6. Հետագա սնուցում, պայքար մոլախոտերի դեմ:

Մակայն վերը նշված գործողությունները ֆինանսական դժվարությունների պատճառով չի կատարվում ժամանակին և որակով, կամ կատարվում է մասնակի:

Գյուղատնտեսության վարման ցածր մակարդակի և ագրոտեխնիկական միջոցառումների անբավարարվածության պատճառով ցածր է մշակվող բույսերի բերքատվությունը:

Բավական է փաստել, որ գյուղում մշակվող մշակաբույսերից աշնանացան ցորենի, գարնանացան գարու և բազմամյա խոտաբույսերի բերքատվությունը համապատասխանաբար կազմում են՝

1. Աշնանացան ցորեն 16 ց/հա

2. Գարնանացան գարի 15 g/հա
3. Բազմամյա խոտաբույսեր (կորնգան) 20-25 g/հա, առվույտ 25-30g/հա (երկու հնձից):

Այն մոտ 2,5-3 անգամ պակաս է հողի պոտենցիալ հնարավորություններից :  
Նորակերտ համայնքի հազեցվածությունը գյուղատնտեսական մեքենաներով բավարար չէ:

#### *Բ. Անասնապահություն*

Նորակերտ համայնքի գյուղատնտեսության երկրորդ կարևոր ճյուղը անասնապահությունն է, որն այսօրվա պայմաններում շատ ցածր մակարդակի վրա է գտնվում: Համայնքում խոշոր եղջերավոր անասունները հիմնականում տեղական ցեղի են: Հազվադեպ հանդիպում են կովկասյան գորշ և սևաբղետ ցեղեր: Հարկ է նշել, որ վերջին տարիներին չի նկատվում անասնագլխաքանակի աճ, ինչը պայմանավորված է արոտավայրերի սահմանափակ տարածքով՝ շուրջ 159 հա, որը չի ոռոգվում , աղուտ հողեր են, որի պատճառով այն բուսածածկ չի:

Արդյունքում ցածր է մանր և խոշոր եղջերավոր անասունների մթերատվությունը (կաթնատվությունը և մսատվությունը):

Համայնքում ոչխարների ցեղերը հիմնականում բալբաս և կիսակոպտաբուրդ են:

Ելնելով գյուղատնտեսության ցածր մակարդակից անմխիթար է նաև սոցիալական իրավիճակը: Բնակչության շուրջ 30-40 %-ը գտնվում է սոցիալապես անմխիթար վիճակում, գրեթե ամբողջ բնակչության 95 % -ը ունեն վարկեր բարձր տոկոսադրույքներով, ստացված եկամուտները չեն բավարարում մինիմալ ծախսերի կատարմանը, շատ բարձր են վճարովի բուժ ծառայության գները, ուսանողների ուսման վարձերը, էներգակիրների արժեքները:

2. Համայնքի տարեկան բյուջեն կազմում է 25,733 միլիոն դրամ, որից համայնքի սեփական եկամուտները 6 միլիոն են:

3. Գյուղատնտեսական արտադրանքը սպառվում է շատ դժվարությամբ, հիմնականում Երևան քաղաքում:

4. Գյուղում գործում է՝

Մեկ դպրոց՝ նախատեսված 380 աշակերտի համար հաճախում են 82 աշակերտ.

Մեկ մանկապարտեզ՝ նախատեսված են 150 երեխայի համար, չի գործում

մեկ բուժ կետ, երկու բուժ սպասարկող

4. Ընտանեկան նպաստառուների քանակը 37 ընտանիք:  
Գյուղը զբոսաշրջության համար հետաքրքրություն ներկայացնող կառույցներ չունի:

**2.2.1 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՊԱԳԱ 5 ՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ**

| Հ<br>Հ | Ծրագրի<br>անվանումը                | Ֆինանսավորողը                                  | Ծրագրի<br>արժեքը<br>/ դրամ / | Իրականացվող տարին |       |       |      |      |
|--------|------------------------------------|--|------------------------------|-------------------|-------|-------|------|------|
|        |                                    |  |                              | 2017              | 2018  | 2019  | 2020 | 2021 |
| 1      | Համայնքի<br>գազաֆիկա-<br>ցում      | ՀՀ<br>Կառավարություն                           | 200 մլն.                     | 100մլն            | 50մլն | 50մլն |      |      |
| 2      | Միջն.<br>Դպրոցի վե-<br>րանորոգում  | ՀՀ<br>Կառավարություն                           | 15 մլն.                      | 15 մլն.           |       |       |      |      |
| 3      | Ոռոգման<br>ցանցի վերա-<br>նորոգում | ՀՀ<br>կառավարություն և<br>համայնքապետա-<br>րան | 8 մլն.                       |                   | 4մլն  | 4 մլն |      |      |
| 4      | Մանկական<br>զբոսայգու<br>կառուցում | Միջազգային<br>կազմակերպություն<br>ներ          | 30մլն.                       |                   | 10    | 10    | 10   |      |
| 5      | Մշակույթի<br>տան վերա-<br>նորոգում | ՀՀԿառավարու-<br>թյուն և համայնքա-<br>պետարան   | 25 մլն.                      |                   | 10մլն | 5     | 5    | 5    |

Նշված ծրագրերի իրականացումը կբարձրացնի ազգաբնակչության սոցիալ  
ունտեսական մակարդակը, կստեղծի նոր աշխատատեղեր, կնվազեցնի արտագաղթը:

**2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ**

1. Ոռոգման ցանցի ծրագիրը գտնվում է նախագծման փուլում: Նշված ծրագրի  
իրականացումով համայնքում կավելանան ոռոգվող տարածքները, ինչի  
հետևանքով կավելանան թանկարժեք մշակաբույսերի ցանքերը:



**2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ**

Համայնքի տարեկան ընդհանուր բյուջեն կազմում է շուրջ 25733,6 դրամ եկամուտներ և նույնքան ծախսեր: Ամեն տարի համայնքի ընդհանուր բնույթի ծախսերը կազմում են շուրջ 21154,4 դրամ, 11 մլն. դրամ ներդրվում է համայնքում տարբեր ծրագրերի իրականացման և համաֆինանսավորման համար: Ապագա 5տարիների համար նախատեսվում են հետևյալ ծրագրերը ըստ տարիների, աղյուսակային և տեքստային ձևերով

| ՀՀ | Ծրագրի անվանումը   | Ֆինանսավորողը                        | Ծրագրի արժեքը | Իրականացվող տարին |         |      |       |       |
|----|--|--------------------------------------|---------------|-------------------|---------|------|-------|-------|
|    |  |                                      |               | 2017              | 2018    | 2019 | 2020  | 2021  |
| 1  | Համայնքի գազաֆիկացում  | Միջազգային Կազմակերպություններ և Հ/Պ | 200 մլն       | 100 մլն           | 100 մլն |      |       |       |
| 2  | Համայնքի վարչական շենքի և նույն շենքում գտնվող մշակույթի տան վերանորոգում և անհրաժեշտ գույքի ձեռք բերում | ՀՀ Կառավարություն և համայնքապետարան  | 25մլն.        |                   | 10մլն.  | 5մլն | 5մլն. | 5մլն. |
| 3  | Ներքին ճանապարհների բարեկարգում վերանորոգում   | Համայնքապետարան                      | 10մլն.        | 2մլն.             | 2մլն.   | 2մլն | 2մլն. | 2մլն  |
| 4  | Ոռոգման ներքին ցանցի վերանորոգում  | Համայնքապետարան                      | 6մլն.         |                   |         | 3մլն | 3մլն. |       |
| 5  | Մանկապարտեզի վերանորոգում  | Միջազգային կազմակերպություններ և Հ/Պ | 30մլն.        | 6մլն.             | 6մլն.   | 6մլն | 6մլն. | 6մլն. |
| 6  | Համայնքի սեփականություն հանդիսացող դպրոցի չօգտագործվող տարածքում խաղահրապարակի կառուցում                 | Միջազգային Կազմակերպություններ և Հ/Պ | 15մլն         | 5մլն.             | 5մլն.   | 5մլն |       |       |

**2.4.1 Գյուղատնտեսության զարգացման ծրագրի հիմնական միջոցառումները**

Ելնելով վերոհիշյալ խնդիրներից կազմվում է 2017-2021թթ. գյուղատնտեսության զարգացման ծրագիր՝ նպատակ ունենալով գյուղում աղքատության նվազեցումը

| N  | <i>Խնդիրները</i>   | Լուծման հնարավորությունները  |
|----|--|--|
| 1  | Տեսակավոր բարձր բերքատու սորտերի՝ սերմերի, տնկանյութերի, պարարտանյութերի և թունաքիմիկատների ձեռք բերում: | Ֆինանսական աջակցությունների, գյուղ զարգացման առանձին ծրագրերի կամ գյուղ նախարարությունից վարկավորման կամ ապառքի ձեռք բերում:                                   |
| 2  | Միկրոպարարտանյութերի և բակտերիալ պարարտանյութերի ձեռք բերում և օգտագործում:                              | Դրամաշնորհների շրջանակում կամ գյուղապետարանի բյուջեի հաշվին՝ հետզնման պայմանով:  |
| 3  | Դիզ. վառելանյութերի և քսանյութերի հայթաթումը համեմատաբար շուկայականից ցածր գներով:                       | Կորդինացված կարգով գյուղապետարանի միջնորդությամբ ձեռք բերում:  |
| 4  | Անասնապահության զարգացում, ցեղական անասնապահության համար ցեղական անասունների մատղաշի ներկրում:           | Գյուղ նախարարության փոխհամաձայնությունը միջազգային ծրագրերի հետ համագործակցություն, բոլոր պրոֆիլակտիկ միջոցառումների իրականացում:                              |
| 5  | Առավել արժեքավոր և բարձր արդյունավետություն ունեցող բույսերի մշակության կազմակերպում:                    | Ծխախոտի և շաքարի ճակնդեղի մշակության կազմակերպում գյուղապետարանի միջնորդությամբ համապատասխան կազմակերպությունների հետ պայմանագիր կնքելու միջոցով:              |
| 6  | Գյուղտեխնիկայի և պահեստամասերի ձեռք բերում:  | Գյուղտեխնիկայի և պահեստամասերի հատկացում գյուղ նախարարության և այլ բարեգործական ընկերությունների կողմից:   |
| 7  | Գյուղմթերքների իրացման դաշտի ստեղծում:   | Մարզպետարանի միջնորդությամբ: Տեղական վերամշակման արտադրամասերի ստեղծում՝ գյուղատնտեսական մթերքների հումքի վերամշակման արտադրամասերի հետ կապի ստեղծման միջոցով: |
| 8  | Երկու նոր հորերի կառուցում:  | Պետական բյուջեի միջոցներով:  |
| 9  | Ներհամայնքային ոռոգման ցանցի կառուցում՝ 1100մ:   | Հազարամյակի <<Մարտահրավերներ>> կորպորացիայի միջոցներով:  |
| 10 | Ցածր տոկոսադրույքով վարկերի ներգրավում:  | <<Կառավարության միջնորդությամբ>>   |
| 11 | Գործող կոպերատիվի հնարավորությունների  | Նոր տեխնիկայի ձեռքբերում, գյուղապետարանի մասնակցությամբ  |

|             |  |
|-------------|--|
| ընդլայնում: |  |
|-------------|--|

## **1.5 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նորակերտ համայնքը գտնվում է 1950մ բարձրության վրա, կլիման չորային է հողամասերի 80%-ը անջրտի են ինչը խոչնդոտում է դաշտավարության զարգացմանը, աճեցվում է միայն հացաբույսեր, մեկ բաժին հողամասը 1.60 հա է, որի զուտ եկամուտը 40-50 հազար դրամ է: Գյուղացիական տնտեսությունները նման արտադրություն կազմակերպելով փաստացի չեն կարող գոյատևել:

Նույն վիճակում է նաև անասնապահությունը: Գյուղամերձ արոտները չեն բավարարում անասնազվիսաքանակին, իսկ հեռագնա արոտներում անասնապահական մթերքների արտադրանքի ինքնարժեքը շատ բարձր է ինչը թույլ չի տալիս ոլորտի զարգացմանը: Նշվում է նաև, որ համայնքը հեռու է գտնվում շուկաներից, մեծածախ առևտրի կետերից, փաստացի գյուղացիական տնտեսությունները ստիպված են իրենց արտադրանքը էժան գներով վաճառել վերավաճառողներին, իսկ իրենց անհրաժեշտ նյութերը ձեռք բերել մանրածախ խանութներից բավականին թանկ գներով:

Ջրովի հողատարածքներում աճեցվող կուլտուրաները նույնպես չեն ապահովում բավականին եկամտաբերություն որովհետև կա իրացման խնդիր: Գյուղի զարգացման միակ ճանապարհը գյուղացիական տնտեսությունների միավորումն է կոպերատիվներում:

## **2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅՆ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

### **2.6.1 Համայնքի ուժեղ կողմերը**

Համայնքն ունի բուհ ավարտած ավել քան 70 շրջանավարտ, որոնք կարողանում են կազմակերպել կրթության և դաստիարակության, մշակութային, գյուղատնտեսական, շինարարական աշխատանքները: Համայնքում է գտնվում տարածաշրջանի „ՎԻՎԱ սել„կապի աշտարակը, համայնքի տարածքով է անցնում երկաթգիծը:

Գյուղում կա Արցախյան պատերազմում զոհված Մեյրան Սարոյանի հուշախաչքարը, որի անունով էլ կոչվել է Նորակերտի միջնակարգ դպրոցը:

### **2.6.2 Համայնքի թույլ կողմերը**

1. Ճանապարհների անմխիթար վիճակը:
2. Ծնելիության նվազեցում կապված արտագաղթի, տնտեսական վիճակի, վատթարացման հետ և ընդհանրապես գյուղի դեմոգրաֆիկ վիճակը.
3. Մեծանում է արտագնա աշխատանքների մեկնողների թիվը:
4. Հողերի անջրտիության և ցանքերի պաշտպանության բացակայության պատճառով գյուղացու եկամուտների նվազում:
5. Գործազրկություն:
6. Գյուղ տեխնիկայի մաշվածություն վերջին աստիճանի:
7. Գյուղ մթերքների իրացման խնդիր:
8. Ցածր տոկոսով վարկերի բացակայություն:
9. Շուկայի անկանխատեսելիություն:
10. Համայնքի հեռավորությունը շուկաներից :

### **2.6.3 Համայնքի հնարավորությունները**

1. Մեծ քանակությամբ ֆիզիկական ինտելեկտուալ աշխատուժի առկայություն:
2. Գյուղմթերքների վերամշակման հնարավորություն:
3. Շուրջ 200 հա ոռոգելի ցանքատարածություն
4. Ոռոգման բարվոք ցանց

### **2.6.4 Համայնքին սպառնացող վտանգները**

Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:

Համայնքի հյուսիս արևմտյան տարածքով անցնող ջրանցքի մնացած հատվածի վերանորոգման անհրաժեշտությունը՝ առանց որի անհնար կլինի համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը:

**Յ.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

*1.1 Համայնքի զարգացման տեսլականը*

Զարգացման հնգամյա ծրագրի իրականացման արդյունքում կունենանք ավելի բարեկեցիկ, ավելի մաքուր և ավելի զարգացած համայնք: Մասնավորապես գյուղատնտեսության զարգացումը գյուղմթերքների արտադրության ծավալների ավելացումը կհանգեցնի համայնքում սոցիալական լարվածության թուլացմանը, աղքատության նվազեցմանը: Կանխատեսվում է աղքատության մակարդակի իջեցնել 6% -ով:

Համայնքի բնակիչների եկամուտների ավելացում կայուն ձևով տարեկան 10% : Նշված ցուցանիշների ապահովման արդյունքում կանխատեսվում է նաև բնակչության թվի աճ 2%-ով ներքին միգրացիայի հաշվին (հարևան գյուղերից և քաղաքներից): Քաղաքապետարանի աջակցությամբ (տարածքների վաճառք, վարձակալություն և այլ տիպի օժանդակություններ) կավելանան մանր և միջին ձեռնարկությունների քանակը:

*1.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները*

- 1.2.1 Բնակչության եկամուտների ավելացում
- 3.2.2 Աղքատության ցուցանիշի նվազում տարեկան 1-2%-ով.
- 3.2.3 Գյուղատնտեսական արտադրության աճ.
- 1.2.4 Կրթության որակի բարելավում.
- 1.2.5 Համայնքի ընդհանուր տարածքի բարեկարգում.
- 1.2.6 Համայնքի սանիտարահիգենիկ վիճակի բարելավում
- 1.2.7 Գործարար մթնոլորտի բարելավում
- 1.2.8 Ծնելիության աճ

## **ԾՐԱԳԻՐ 1**

### **Համայնքի գազաֆիկացում**

Համայնքի երկար տարիների ամենակարևոր և մինչև օրս չլուծված խնդիրներից է համայնքի գազի խնդիրը, որը հուզում է ամբողջ ազգաբնակչությանը: Այն այսօրվա պայմաններում շատ անհրաժեշտ է և կլուծի շատ կարևոր սոցիալական խնդիրներ:

### **Ծրագրի նպատակն ու խնդիրները**

1. Գազաֆիկացնել և մատակարարել համայնքի ամբողջ բնակչությանը բնական գազով:

### **Ծրագրի իրագործումը**

1. Համայնքի բյուջեից հատկացնել անհրաժեշտ չափի գումար և աշխատուժ ծրագիրը իրականացնելու համար:
2. Ծրագիրը սկսել 2017 -2019 թթ –ի ընթացքում:

### **Ծրագրից սպասվող արդյունքները**

1. Բնակչությունը ապահովված կլինի բնական գազով և կլավանա կենցաղային պայմանները:
2. Բնակչության մեծ մասը կապահովվի բնակարանների տաքացման գործում և այսուհետ վառելավայտի ձեռք բերելը անհրաժեշտ չի լինի:

## **ԾՐԱԳԻՐ 2**

### **Համայնքի վարչական շենքի և նույն շենքում գտնվող մշակույթի տան վերանորոգում և անհրաժեշտ գույքի ձեռք բերում:**

Համայնքապետարանի շենքը կառուցվել է 40-50-ական թվականներին և ունի վերանորոգման խիստ կարիք: Շենքում են գտնվում գյուղի միակ դահլիճը, գյուղապետարանը, ժամանցի սրահը, համակարգչային կենտրոնը և այլն: Հիմնովին վերակառուցման արդյունքում կստեղծվի համայնքապետարանի աշխատանքների համար նորմալ պայմաններ, կամրացվի շենքը և գյուղը կունենա վերակառուցված դահլիճ իրեն անհրաժեշտ գույքով համապատասխան միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու համար:

### **Ծրագրի նպատակն ու խնդիրները**

1. Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը.
2. Մշակույթի տան դահլիճը տրամադրել տարբեր կարգի միջոցառումների անցկացմանը.
3. Տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկոյթներ.
4. Տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար.
5. Համակարգչային կենտրոնը ծառայեցնել ընթերցանության համար.

### **Ծրագրի իրագործումը**

Գյուղապետարանի բյուջեից հատկացնել շուրջ 5մլն.դրամ վերանորոգման աշխատանքները սկսելու համար:

Վերանորոգել գյուղապետարանի շենքի 3 առանձնասենյակ : Աշխատանքները կազմակերպել 2017-2019թթ. ընթացքում:

### **Ծրագրից սպասվող արդյունքները**

1. Բնակչության հանգիստն ավելի հետաքրքիր և արդյունավետ անցկացնելը.
2. Ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների հոգևոր և կրթական զարգացման համար.
3. Ապահովել համայնքապետարանի նորմալ գործունեությունը.
4. Համայնքում ունենալ միջոցառումների անցկացման դահլիճ:

### **ԾՐԱԳԻՐ 3.**

#### **Համայնքի ներքին ճանապարհների բարեկարգում և վերանորոգում**

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարություն 10 կմ-ից ավելի է, որից 3 կմ-ը գլխավոր ճանապարհ է հանդիսանում: Ֆինանսական սղության պատճառով մոտ 30 տարի չեն ասֆալտապատվել գյուղամիջյան կենտրոնական ճանապարհները:

### **Օրագրի հիմնական նպատակները**

1. Ապահովել երթևեկության բավարար պայմաններ տրանսպորտի բոլոր միջոցների համար, տարվա բոլոր եղանակներին:
2. Վերացնել փողոցների ջրափոսերը:

### **Օրագրի իրագործումը**

1. Համայնքապետարանի բյուջեից յուրաքանչյուր տարի կհատկացվի շուրջ 5մլն., կկատարվի ավազի և խճաքարի փռում համայնքի փողոցներում , հետագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ:
2. Նշված աշխատանքները կազմակերպել 2017-2021թթ. ընթացքում:

### **ԾՐԱԳԻՐ 4**

#### **Համայնքի ոռոգման ջրի ներքին ցանցի վերանորոգում**

Համայնքի ոռոգման ներքին ցանցը կառուցվել է 30-35 տարի առաջ, որի ընդհանուր երկարությունը կազմում է 15 կմ: Ֆինանսական սղության պատճառով ոռոգման ջրի ներքին ցանցը չի վերանորոգվել, խողովակները մշակվել ու տեղ-տեղ ջարդվել են, որի պատճառով գյուղացին չի կարող ոռոգել իր տնամերձ հողատարածքը:

1. Համայնքի առաջնային խնդիրներից է ոռոգման ջրի հին խողովակների փոխարինումը նոր խողովակներով:
2. Ոռոգման ցանցի մնացած մասերը կառուցել կիսախողովակներով, բարեկարգելով նաև փողոցները:

### **Օրագրի հիմնական նպատակները**

1. Ապահովել գյուղացուն մշտական ոռոգման ջրով.
2. Նվազեցնել ոռոգման ջրի կորուստները
3. Բարեկարգել փողոցները.

### **Օրագրի իրագործումը**

1. Ոռոգման ջրի ներքին ցանցի ընդլայնման համար համայնքի միջոցներով բարեգործների աջակցությամբ կառուցել 1000մ. երկարությամբ ոռոգման ներքին ցանցի խողովակներով: Այդ նպատակով համայնքի կողմից կներդրվի ընդհանուր գումարը մոտ 3 մլն. դրամի չափով:
2. Կառուցել ոռոգման ներքին ցանց կիսախողովակներով 2կմ երկարությամբ:

### **Օրագրից սպասվող արդյունքները**



2. Իրականացնելով այս ծրագիրը համայնքի 100-200 հա հողերը կապահովեն ոռոգման ջրով.
3. Կավելանա գյուղմթերքների արտադրությունը

## **ԾՐԱԳԻՐ 5**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ**

#### **Ծրագրի նկարագրությունը**

Համայնքի մանկապարտեզը շահագործման է հանձնվել 1983թ-ին:

Համայնքի առաջնահերթ խնդիրներից է մանկապարտեզի առայժմա 1-ին մասնաշենքի վերանորոգումը և շահագործումը:

#### **Ծրագրի հիմնական նպատակներն են՝**

1. Ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխաների ընդհանուր զարգացման համար.
2. Բարելավել երեխաների կրթական- դասիարակչական որակը.

#### **Ծրագրի իրագործումը**

Համայնքապետարանի բյուջեից 5տարվա ընթացքում վերանորոգել համայնքի մանկապարտեզի առաջին և երկրորդ մասնաշենքերի կտուրները, լուսամուտները,

դռները և այլն: Այդ նպատակով բյուջեից հատկացնել 10մլն. դրամ 5տարվա ընթացքում համամասնորեն:

### **Ծրագրից սպասվող արդյունքները**

Իրականացնելով այս ծրագիրը, արդյունքում կավելանա երեխաների հաճախելիությունը մանկապարտեզ և երեխաների կրթամակարդակը: Կավելանան աշխատատեղեր, որը կնպաստի արտագաղթի կրճատմանը: Երեխաների համար կստեղծվեն նորմալ պայմաններ` ֆիզիկական և հոգևոր զարգացման համար:

### **ԾՐԱԳԻՐ 6**

#### **Համայնքի սեփականություն հանդիսացող դպրոցի չօգտագործվող տարածքում խաղահրապարակի կառուցում**

Դպրոցի արևմտյան ամբողջ տարածքը չի օգտագործվում և մնում է անբարեկարգ վիճակում:

### **Ծրագրի նպատակը**

2. Բարեկարգել և կանաչապատել նշված տարածքը.
3. Տարածքի մի մասում վերանորոգել ֆուտբոլի համար նախատեսված խաղահրապարակը և մի տարածք հատկացնել վոլեյբոլի մարզահրապարակի կառուցման համար:
4. Տարածքի մնացած մասերում կատարել ծառատնկում և աստիճանաբար վերածել զբոսայգու:

### **Ծրագրի իրագործումը**

Ծրագրի իրագործումը կատարել բյուջեի միջոցներով 5 տարվա ընթացքում տրամադրելով տարեկան 10 միլիոն դրամ 2017-2021թթ.-ին: Ծրագրի իրականացման համար ներգրավել նաև համայնքի բնակչությանը և բարեգործների:

### **Ծրագրից սպասվող արդյունքները**

1. Կազմակերպել երիտասարդության ժամանցը.
2. Բարեկարգել համայնքի կենտրոնական մասը
3. Ավելացնել համայնքի կանաչապատ տարածքները:

### Կ ր թ ու թ յ ու ն

Գյուղն ունի մեկ դպրոց՝ միջնակարգ, մեկ մանկապարտեզ, մանկապարտեզը չի գործում դպրոցը որը գործում է ունի գազաֆիկացման խնդիր, ինչպես նաև ամբողջ գյուղը: Միջնակարգ դպրոցը ունի հիմնարար վերանորոգման կարիք:

### Մ շ ա կ ու յ թ. Ս պ ո ռ տ. Հ ո գ և ո ռ դ ա ս տ ի ա ր ա կ ու թ յ ու ն

Գյուղը չունի մշակույթի և սպորտի հաստատություններ ինչը հարուցում է բնակչության մասնավորապես՝ երիտասարդության դժգոհությունը:

### Ա ո ռ դ ջ ա պ ա հ ու թ յ ու ն

Գյուղում գործում է մեկ բուժկետ, երկու աշխատակից: Շենքը գտնվում է մանկապարտեզի շենքի մի կորպուսում հատկացված առանձնասենյակում: Առանձնապես կարևոր է բուժ կետը հազեցված լինի ժամանակակից սարքավորումներով: Սպասարկման մակարդակը գտնվում է բավարար վիճակում:

### Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

#### *Ռազմավարություն*

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական, մշակույթի և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

1. Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում:
2. Կազմակերպել համայնքի բնակչության մշակույթային կյանքը և հանգիստը, աշխատանքից հետո՝ ազատ ժամանակ:
3. Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
4. Մանկապարտեզի վերանորոգում:
5. Կառուցել ֆուտբոլի և վոլեյբոլի խաղահրապարակներ:
6. Ստեղծել սպորտի և մշակույթի խմբակներ:

Ըստ առանձին բնագավառների՝ առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Համայնքում կոնկրետ ծրագրերի իրականացման համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքում այն ունի հետևյալ պատկերը՝

|   | Եկամուտի տեսակը.             | 2017թ. | 2018թ. | 2019թ. | 2020թ. | 2021թ. |
|---|------------------------------|--------|--------|--------|--------|--------|
| 1 | Հողի հարկ                    | 5214.0 | 5214.0 | 5214.0 | 5214.0 | 5214.0 |
| 2 | Գույք հարկ                   | 1800   | 1800   | 1800   | 1800   | 1800   |
| 3 | Տեղական տուրք                | 10.0   | 10.0   | 10.0   | 10.0   | 10.0   |
| 4 | Տեղ. Վճարներ                 | -      | -      | -      | -      | -      |
| 5 | Վարձավճար                    | 4213.1 | 4213.1 | 4213.1 | 4213.1 | 4213.1 |
| 6 | Գույքի օտարումից մուտք       | -      | -      | -      | -      | -      |
| 7 | Ընթացք. Տրանսֆ.              | -      | -      | -      | -      | -      |
| 8 | Ընդամենը կանխատեսված եկամուտ | -      | -      | -      | -      | -      |

Համայնքի բյուջեն գոյանում է հարկային եկամուտներից, վարձավճարներից, տեղական տուրքերից և համահարթեցման դոտացիայից: Վերջին 3 տարիների տվյալները ցույց են տալիս, որ համայնքի սեփական եկամուտները էական փոփոխությունների չի ենթարկվում: Այսինքն չեն փոփոխվում հողի հարկի, գույքահարկի, վարձավճարի և այլ եկամուտների ելակետային տվյալները: Մեր կանխատեսումներով ապագա 5 տարում նույնպես սեփական եկամուտների մասով էական փոփոխություններ տեղի չեն ունենալու և համայնքի բյուջեի աճը կախված կլինի տրամադրվող դոտացիայից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՍՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

|   | ցուցանիշներ             | Չափի միավոր | 2017թ.  | 2018թ.  | 2019թ.  | 2020թ.  | 2021թ.  |
|---|-------------------------|-------------|---------|---------|---------|---------|---------|
| 1 | Համայնքի տարածքը        | հա          | 2739.12 | 2739.12 | 2739.12 | 2739.12 | 2739.12 |
| 2 | Բնակչության թիվը        | Մարդ        | 1021    | 1022    | 1025    | 1025    | 1030    |
| 3 | Ծնունդ                  | Մարդ        | 6       | 8       | 10      | 10      | 10      |
| 4 | Մահացություն            | Մարդ        | 4       | 6       | 8       | 8       | 8       |
| 5 | Աշխ. ռեսուրս. այդ թվում | Մարդ        | 412     | 420     | 425     | 425     | 430     |

|    |  |        |         |         |         |         |         |
|----|--|--------|---------|---------|---------|---------|---------|
| 6  | Զբաղ. ըստ տնտ. ճյուղերի                              | Մարդ   | 300     | 305     | 310     | 310     | 315     |
| 7  | Գործազրկության մակարդակը                             | %      | 50      | 50      | 50      | 50      | 50      |
| 8  | Առև. և հաս. սննդի օբյեկտների թիվը                    | Հատ    | 2       | 2       | 3       | 3       | 3       |
| 9  | Պահուստային հողեր                                    | Հա     | -       | -       | -       | -       | -       |
| 10 | Պահուստային հողերի օգտագործման մակարդակը             | %      | -       | -       | -       | -       | -       |
| 11 | Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը        | Կմ     | 12      | 12      | 12      | 12      | 12      |
| 12 | Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը           | Կմ     | 11      | 11      | 11      | 11      | 11      |
| 13 | Ոռոգման համակարգի տակ գտնվող հողեր                   | Հա     | 54      | 54      | 54      | 54      | 54      |
| 14 | Ներհամայնքային փողոցներ և ճանապարհների երկարությունը | Կմ     | 11      | 11      | 11      | 11      | 11      |
| 15 | Զբարեկարգված փողոցների և ճանապարհների երկ.           | Կմ     | 8       | 8       | 8       | 8       | 8       |
| 16 | Մասնավոր բնակ. Ֆոնդ                                  | Հազ/քմ | 1000000 | 1000000 | 1000000 | 1000000 | 1000000 |
| 17 | Բնակ. կարիք ընդ. թիվը                                | Հատ    | 75      | 75      | 75      | 80      | 80      |
| 18 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը                        | լ/օր   | 10      | 10      | 10      | 10      | 10      |
| 19 | Զրի կորուստները ցանցում                              | %      | 30      | 30      | 30      | 30      | 30      |
| 20 | Սովորողների թիվը, հանրակրթական դպրոցում              | Մարդ   | 82      | 85      | 85      | 90      | 100     |
| 21 | Երեխաների թիվը մանկապարտեզում                        | Մարդ   | -       | -       | -       | -       | -       |
| 22 | Գյուղապետ. և   | մարդ   | 11      | 11      | 12      | 12      | 12      |

|  |                 |  |  |  |  |  |  |
|--|-----------------|--|--|--|--|--|--|
|  | ենթ.աշխատ. թիվը |  |  |  |  |  |  |
|--|-----------------|--|--|--|--|--|--|

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

1.Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը – 270

այդ թվում անհատական տնտեսություն- 270

2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը

2.1 ցորեն

2.2 գարի

2.3 կարտոֆիլ

2.4 կաղամբ

2.5 բանջարաբոստանային կուլտ.

2.6 կաթ

2.7 միս

2.8 բուրդ

2.9 ձու

2.10 մեղր

3. Ցանքատարածությունները

3.1 հացահատիկ-900հա.

3.2 կարտոֆիլ-200

3.3 բանջարաբոստանային կուլտ.-11

3.4 կաղամբ-2

3.5 առվույտ- 50

3.6 կորնզան- 200

4. Անասնազլխաքանակը /հատ/

4.1 խոշոր եղջերավոր անասուններ- 935

4.2 այդ թվում կովեր- 462

4.3 մանր եղջ. անաս.- 4166

4.4 այդ թվում մայրեր- 2316

4.5 խոզեր- 188

4.6 այդ թվում մայրեր-62

4.7 թռչուններ- 4215

4.8 այդ թվում հավեր-2420

4.9 մեղվաընտանիքներ- 166

5.Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը /հատ/

Մասնավոր սեփականություն

1.1 թրթուրավոր տրակտոր- 4

1.2 անիվավոր տրակտոր-27

1.3 հացահատիկային կոմբայն-8

1.4 խոտհնձիչ կոմբայն-2

1.5 բեռնատար ավտ. Տարբեր մակնիշների-18

1.6 տրակտորային կցասայլեր-20

1.7 գութաններ-15

1.8 կուլտիվատորներ-10

1.9 շարքացաններ- 9

1.10 խոտ հակավորող մեքենաներ-5

1.11 կերամանրիչ/գտիչ/-2

1.12 հատիկաղաց-2

Համայնքի ղեկավար՝

Գ. Մարգարյան

